

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024

Ապրիլի երկրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրիլի երկրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում բարձր է եղել նորմայից 2-4 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են ապրիլի 17-20-ն ընկած ժամանակահատվածում, երբ հանրապետության առանձին շրջաններում դիտված առավելագույն արժեքները գերազանցեցին պատմական արժեքներին: Տավուշում գրանցվել է +25…+27^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +19…+21^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +26…+28^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +31…+33^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +23…+26^{0}C, Շիրակում՝ +20…+24^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +19…+22^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +23…+25^{0}C, Գեղարքունիքում՝ +17…+21^{0}C, Լոռիում՝ +24…+26^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +28…+30^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +18…+20^{0}C, նախալեռներում՝ +21…+23^{0}C (Աշտարակ՝ +27^{0}C):

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են ապրիլի 12-14-ը և 16-ին. Տավուշում գրանցվել է +6…+8^{0}C (Դիլիջան՝ +2^{0}C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 0…-2^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +3…+5^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +6…+8^{0}C, նախալեռնային շրջաններում -1…+4^{0}C, Շիրակում՝ -3…+2^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում -2…+2^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +3…+5^{0}C, Գեղարքունիքում՝ -3…+2^{0}C, Լոռիում՝ -1…+4^{0}C (Տաշիր՝ -4^{0}C), Արմավիրում, Արարատում՝ +5…+7^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ -2…-4^{0}C, նախալեռներում՝ +3…+5^{0}C:



Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 2-17մմ (4-86%), Լոռիում՝ 5-9մմ (19-41%), Տավուշում՝ 2-13մմ (15-56%), Արագածոտնի լեռնային և նախալեռնային շրջաններում՝ 6-8մմ (31-48%), Գեղարքունիքում՝ 6-33մմ (36-105%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 6-11մմ (20-66%), նախալեռներում՝ 3-5մմ (20-22%), Արմավիրում՝ 8-17մմ (73-119%), Արարատում՝ 9-14մմ (48-128%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 11մմ (32%), նախալեռներում՝ 16մմ (74%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 11-46մմ (75-227%), նախալեռներում՝ 15-43մմ (85-173%):

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են ապրիլի 12-ին և 16-ին. լեռնային շրջաններում՝ -2...-4^{0}C, Արարատյան դաշտում, Վայոց ձորի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +1....+5^{0}C (Դիլիջան՝ -1^{0}C):

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Աշնանացան ցորեն

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը գտնվել է ցողունակալման, նախալեռնային շրջաններում՝ ծեղացողունի ներքին հանգույցների առաջացման, իսկ առանձին հովտային շրջաններում հասկակալման փուլերում:

Հովտային շրջաններում աշնանացանի բարձրությունը տասնօրյակի վերջում հասել է 40-52սմ-ի, տասնօրյակային աճը կազմել է 5-6սմ:

Մերձավանում աշնանացան ցորենի դաշտում բույսի աճի և զարգացման համար անհրաժեշտ հողի խոնավության պաշարները 0-20սմ շերտում՝ 49մմ, 0-30սմ՝ 83մմ, որն անցյալ տասնօրյակի համեմատ նվազել է 12-26մմ-ով:

Պտղատուներ, խաղող

Հովտային շրջաններում դեղձենու ծաղկումն ավարտվել է, դիտվել է խաղողի առաջին, տեղ-տեղ՝ երրորդ տերևների առաջացումը: Նախալեռնային շրջաններում խաղողի բողբոջներն ուռչել են:

Լեռնային շրջաններում հնդավորների բողբոջներն ուռչել են, նախալեռնային շրջաններում՝ ծաղկել:

Կարտոֆիլ և խոտաբույսեր

Նախալեռնային շրջաններում շարունակվել, լեռնային շրջաններում սկսվել է կարտոֆիլի ցանքը:

Հովտային շրջաններում առվույտի բարձրությունը տասնօրյակի վերջում հասել է 44սմ-ի: Տասնօրյակային աճը կազմել է 8-10սմ: